



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

8 հոկտեմբերի 2019թ. թիվ 1471

**Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ, Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
ՍԱՐԱՄԵՋ ԵՎ ՍԱՐԱՀԱՐԹ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով քաղաքաշինության վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահրամ Ղարսայանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Վահրամ Դանիելյանին և ճարտարապետաշինարարական բաժնի պետ Ալեքսանդր Հարությունյանին ա/թ հոկտեմբերի 9-ին մեկ օրով գործուղել Սարամեջ և Սարահարթ համայնքներ՝ սուբվենցիոն ծրագրերով կատարվող աշխատանքները դիտարկելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

10/8/2019

X

ՀՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 8
ք.Վանաձոր